թնդանօթաձգութեան, կայարանում գտնուող 60 թուրքերը տարուեցին քաղաքից դուրս ու կոտորուեցին, թրքական թաղը պաշարուեց գրգռուած ամբոխի կողմից և փրկուեց միայն Դաշնակցականների ջանքերով:

Փետր. 19–ին Երևանի նահանգային կոմիսար Ս. Թորոսեանը ուղիղ հեռագրաթելով տեղեկագրում է Թիֆլիս. «Պաշտօնապէս ինձ հաղորդել են հետեւեալը. փետր. 16–ին քրդերը Սուրմալուի գաւառի Ջալալցիների և տեղական թուրքերի հետ յարձակուեցին Ղամարլուի վրա, որտեղ կանգնած են հայկական զօրամասեր: Փետր. 17–ի առաւօտեան այնտեղ տեղի ունեցաւ ընդհարում: Ազդեցիկ թուրքերից կազմակերպեցի հաշտարար պատուիրակութիւն: Նրանք մեկնեցին Ղամարլու, բայց 17–ի գիշերը գաւառամասի կոմիսարը զեկուցեց, որ թուրքերի և հայ զինուորների միջև տեղի է ունենում հրացանաձգութիւն. երկու կողմից էլ շատ զոհեր կան: Նոյն գիշերը Դաւալուից ստացուել են հեռագիրներ, որոնք յայտնում են, որ Ռեւազլու գիւղը շրջապատուած է թուրքերով... Պատգամաւորները տեղ չհասան, որովհետև Աղհամզալուի մօտ գինուած թուրքերը կտրել էին ճանապարհը և թոյլ չէին տուել առաջ գնալ: Աղհամզալուի մօտ կանգ էին առել նաև զօրամասեր, որոնք առաջ էին շարժւում շտաբի հրամանով: Երէկ Երեւանից Ղամարլուի ուղղութեամբ մեկնեցին զօրամասեր: Աղհամզալուի մօտ նրանց կանգնեցրել էին խճուղուց քիչ հեռու խրամատներ մտած թուրքերը: Այդտեղ զօրամասերը բռնուեցին կռուի: Թուրքերը Ուլուխանլուից օգնութիւն ստացան: Զօրամասը շարժուեց առաջ և փախցրեց նրանց ու ստիպուած եղաւ իր գործողութիւնները ուղղել Ուլուխանլուի դէմ»:

Մահմետական շարժումները ստացել էին տարերային բնոյթ. ամէն տեղ կռիւ էր. յարձակւում էին թուրքերն ու քրդերը. պաշտպանւում՝ հայ զօրամասերն ու ինքնապաշտպանութեան խմբերը: Երկաթուղին հայերի համար կտրուած էր. գնացքից հանում էին հայ ճամբորդներին և ամենքի աչքի առջև մորթում: Դաւալուն կտրուել էր Երևանից. յուն. 20–ին, մի ճակատամարտում, այնտեղ սպանուել էր Խոսրովը, և հարիւրեակն ու գիւղի բնակչութիւնը պաշարուել էին: Ալի Ղըզըլը նոյնպէս շրջապատուած էր թշնամիներով, և Մարտիրոսի հարիւրեակը կտրուել էր կենտրոնից: Շարուր—Նախիջևանի ամբողջ գաւառում կռիւներ էին տեղի ունենում թուրքերի և հայերի միջև: Փակուեց նոյնիսկ Ելենովկա—Նոր–Բայազէտ ճանապարհը, ուր հազիւ 6–7 թուրք գիւղ կար, և Շուշու գնդի մասերը, Հաջի–Մուխան գիւղի մօտ ենթարկուեցին յարձակման դարանամուտ թուրքերի կողմից, որոնք սպանեցին 70 հայ զինուորներ ու մասնաւոր ճամբորդներ: Սուրմալուի խճուղին կտրուած էր, և կապը Երեւանի հետ պահւում էր հին ճանապարհով, Էվջիլարի վրայով: Գնացքները յարձակման էին ենթարկւում: Եւ Սարդարապատ—Ալագեոզի շրջանում, ապրանքատար մի գնացքի պաշտպանութեան ժամանակ, հերոսական մահով մեռաւ սպայ Շաւարշեանը մի խումբ զինուորների հետ:

Խռովութիւնները նահանգից աստիճանաբար մօտենում էին և քաղաքին. Զանգիբասարը, 7–10 կիլոմետր հեռու Երեւանից, գրգռումի և ըմբոստութիւնների, աւազակային յարձակումների հնոց էր: Ուլուխանլու կայարանում հայերին դուրս էին բերում վագոններից ու գնդակահարում: Այս ամենը բարձրացնում էր և քաղաքի մահմետական խուժանի տրամադրու-